

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՆՈՒՇ ԴԱՐՔՈՆՅԱՆ

Հումանիզմն ու ժողովուրդների բարեկամությունը եղել ու մնում են բոլոր ազգերի ու ժամանակների մեծ գրողներին զբաղեցնող հիմնական հարցերից մեկը:

Ճշմարտացի կերպարների միջոցով վերարտադրելով կյանքը, արտացոլելով բուն իսկ ժողովուրդների մեջ տեղի ունեցող պրոցեսները՝ բարեկամության, սիրո և փոխադարձ մերձեցման ձգտումները, գեղարվեստական գրականությունը հասնում է խոշոր ընդհանրացումների: Դրանով իսկ ձեռք է բերում ներգործուն հզոր ուժ և թափանցելով լայն զանգվածների մեջ, տիրապետում է նրանց մտքերին, յգեշնչում նրանց: Գեղարվեստական գրականությունն այս առանձնահատկությունը նկատի ունենալով է, որ Թումանյանը գրում է. «Ազգերին լավ ճանաչելու և նրանց մեջ փոխադարձ սեր ու հարգանք արծարծելու ամենից ազնիվ հող ու ամենից մեծ կապ չի կարող լինել, քան գրականությունն է, որի մեջ հանդես են դալիս նրանց լավագույն զգացումները, նրանց ազգային հանճարն ու ոգին»¹:

Պատահական չէ, որ համաշխարհային գեղարվեստական գրականության լավագույն կոթողներում, փնչպես և բազմադարյան հայ գրականության մեջ այս թեմայով ստեղծված բազմաթիվ հուզառատ էջեր կան:

Թումանյանի ստեղծագործությունը այս թեմային նոր երանգներ ու նոր գույներ ավելացրեց, անկրկնելի թումանյանական գույներ:

Շատ է գրել Թումանյանը ժողովուրդների բարեկամության մասին. գրել է հոգվածներ, նամակներ՝ հասարակական անվանի գործիչներին, բանաստեղծություններ, պատմվածքներ... Ամեն տեղ կոչ է անում՝ «հաղաղ կյանք, արդար աշխատանք ու ընդհանուր եղբայրություն»:— «էսպես բարի ու ազնիվ է մտածում ինքը հասարակ աշխատավոր ժողովուրդը»,— ասում է Թումանյանը: Հասարակ աշխատավոր ժողովուրդի այս աշխարհայեցողությամբ էլ ներթափանցված է մեծ բանաստեղծի ողջ ստեղծագործությունը:

Թումանյանին առանձնապես շատ էր հուզում մոտիկ հարևանների՝ ադրբեջանցիների² ու վրացիների հետ բարեկամության հարցը: «Մենք՝ Կովկասյան ժողովուրդներս եղբայրներ ենք հավերժ կողք-հողքի,— գրում է Թումանյանը,— ինչպես մեր հայրենի լեռները՝ ամեն մեկն իր տեղում, իրենց շողջողուն գագաթներով միշտ կանգնած միմյանց թիկունքին և իրենց հիմքերով միացած»³:

1 Հոգվ. Թումանյան, Երկերի ժողովածու, 5 հատորով, Երևան, 1950, հ. 1, էջ 462:

2 Նույն տեղում, հ. 4, 1951, էջ 448:

3 Այս մասին տե՛ս տողերիս հեղինակի «Հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունը Թումանյանի երկու պատմվածքում» հոդվածը: «Երաբեր», 1972, № 2, էջ 11—18:

Թումանյանը երկար առաքիններ ապրել ու ստեղծագործել է Թբիլիսիում և հիացել Վրաստանի ու վրաց ժողովրդի հոգևոր հարուստ մշակույթով, վրաց բանաստեղծության մեջ զգացել ժողովրդի անմիջական, սրտաբաց բնավորությունը, ազնվությունը, ազատության ու գեղեցկության սերը: Տարբեր առիթներով խոսելով հայ և վրաց ժողովուրդների բարեկամության մասին, նա կրկին ու կրկին հավաստում էր, որ հայն ու վրացին եղել ու մնում են անսասան բարեկամներ՝ կապված իրենց պատմական ճակատագրով և մեծագույն հիշատակներով:

Անցյալ փորձերը, — գրում է Թումանյանը, — ցույց են տվել, որ անկարելի է հայ-վրացական ժողովուրդների ընդհարումը զուգահեռ բերել:

Արո՛, եղել են տիտեր միջադեպեր, բայց դրանք կարողացել են միայն պաղեցնել, պղտորել, թունավորել ժամանակավորապես էդ ժողովուրդների հարաբերությունները, էն էլ միշտ վելին խավերում, և շատ-շատ թույնը հասցնել մինչև ֆորժիչների ու հրապարակախոսների լեզուն, բայց էդ թույնը հասցնել մինչև հայ և վրացի ժողովուրդների հոգու խորքը — չի հաջողել երբեք⁴:

Իր բարձր հումանիստական գաղափարներով Թումանյանը հակադրվում էր ցարիզմի ազգակործան քաղաքականությանը: Երբ ցարիզմի գործակալները ստի ու կեղծիքի օգնությամբ փորձում էին իրար դեմ հանել զարերով հաշտ ու խաղաղ ապրող դրացի ժողովուրդներին՝ հայերին ու վրացիներին, նա եղբայրության ու բարեկամության երգն էր հնչեցնում: 90-ական թվականների բանաստեղծի աշխարհգացողության լավագույն արգասիքներից է «Հաշտություն» ալլաբանական բանաստեղծությունը, ուր նա Հայաստանի խորհրդանշել Մասիսի և Վրաստանի խորհրդանշել Կազբեկի միջոցով պատկերում է հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Հին փառքերով ու նոր ցավերով միասին ապրող, բայց առժամանակ իրարից խորթացած երկու ազգականների սրտամոտ զրույց է այս բանաստեղծությունը, ուր առաջին տողերից իսկ զգացվում է բարեկամության շունչը, զգացվում է, որ թշնամանքի որումը երբեք խոր արմատներ չի գցել դարերով բարեկամ ու միևնույն կրակով այրվող ժողովուրդների սրտերում: Հսկա Մասիսը Թիմոս է վիթխարի Կազբեկին. «Ողջո՛ւյն բարեկամ»: Կարծես մի ծանր, անշող բեռ է ընկնում եղբայրական գորովալից խոսքի սպասող Կազբեկի ուսերից, ու անմիջապես դղրդում է սրտաբուխ պատասխանը. «Ողջո՛ւյն քե՛զ, ընկեր»:

Մեկը հսկա, մյուսը՝ վիթխարի ու հսկաներին վայել բարեկամություն:

Բանաստեղծությունը բյուրեղային հստակության է հասնում վերջին երեք տան մեջ.

Այստեղ տուր ձեռքդ, մոտեցիր, ընկեր,
Մի նայի՛ր ետև, ի՛նչ է կատարվում...
Մենք հո եղբայր ենք դարերից ի վեր,
Մեզ հո միևնույն կրակն է այրում:
Մոտեցիր..., խմ հին ազգական,
Եվ թող որտտան լեռները բոլոր,

⁴ Հոսի հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, լջ 421.

Թող լինեն վկա մեր նոր հաշտության,—
 հոսքը վերջացրեց Մասիսն ալևոր,
 Կովկասի երկինքն ամպեց վերստին,
 Ճալթեցին անթիվ կայծակներ ահեղ,
 Այն սեգ լեռները ողջունում էին
 Եվ ուրախության արցունքն էր հեղեղ⁵:

Բարեկամության, հաշտության կոչ է սա առանց ավելորդ էմոցիաների ու կրքի, բայց՝ տեսեք ինչպես ուժեղ է այրում կրակը, թաքուն տողերի միջից:

Մի խստաշունչ լրջություն կա բանաստեղծական այս տողերում, մի ազնիվ մտահոգություն և նույնիսկ ներքին վախ՝ երկու ժողովուրդների ապագայի նկատմամբ:

Ցարիզմի գործակալներին հաջողվել է ինչ-որ չափով պղտորել խաղաղ դրացիների հոգիները, թշնամանքի սերմեր ցանել այնտեղ: Բանաստեղծը լավ է հասկանում «բաժանիր ու տիրես» նենգ քաղաքականության ողջ աղետաբերությունը, նա տագնապում է, և ահա հնչում է նրա խիստ ձայնը.

«Այստեղ տուր ձեռքդ, մոտեցիր, ընկեր»: Սա առաջին քայլն է իրենից հեռացող բարեկամին կանչելու: Եվ երբ բարեկամը կողքին է արդեն, զգում է հարազատ ձեռքի սեղմումը, սիրո քնքշանքի խոսքեր չի ասում (դա խոր ենթատեքստ է), այլ մատնացույց է անում երկու ժողովուրդների պատմությունը:

Մենք հո եղբայր ենք դարերից ի վեր,

Սեղ հո միևնույն կրակն է այրում:

Ուշադրություն դարձնենք, թե հոգեբանական, գեղարվեստական ինչ նուրբ անցում է կատարվում մի հարցից մյուսը, ինչպես են կամրջվում անցյալ և նոր ժամանակները: Անցյալը պետք է որպես նոր օրերի բարեկամության ամուր պատվանդան: Հիմա էականը նոր օրերի բարեկամությունն է, որ պետք է պահպանել սրբություն: Այստեղ կա նախազգուշացում երկու ժողովուրդներին տանջող սոցիալական չարիքի մասին, այն մասին, որ իրենց հատկապես հենց այդ օրերին է հարկավոր միասին ըինել, նորից ուսուսի տալ և միասնական ուժերով պայքարել երջանկության ու լավ ապագայի համար: Ասելիքն ասված է. սրանից հետո արդեն կարելի է նաև որոշ ջերմություն ընել բանաստեղծական տողում, և դա անում է Թումանյանը դարձյալ մեծ վարպետությամբ, դարձյալ ավելի շատ տեղ թողնելով զգալու համար:

«Մոտեցիր, իմ հին ազգական», Ընդամենը մի բառ, ընկե՛ր բառը փոխում է իմ հին ազգականը, և ժողովրդական խոր իմաստությամբ է շնչում բանաստեղծական տողը՝ ճին ազգական, այսինքն՝ «առան ինչի նորն է լավ, բարեկամի հինը», և որ այդ բարեկամությունը խաթարել չի լինի: Այսբանն էլ բավական էր, մնացածն ասված է լեռնյայն, մնացածն ասում են երկու ժողովուրդների դարավոր պատմությունը ու ժողովրդից փոխ առած լակոնիկ փոխառապական մտածողությունը: Հաշտությունը կայացած է, խոսվել բարեկամությունը վերագտնված: Այստեղ արդեն բանաստեղծության մեջ մըտ-

նոսմ է նաև մի փոքր հանդիսավորություն՝ հաշտությունը, բարեկամության հաղթանակը տոնելու համար: Այս հաշտության ուրախությունը կիսում են նաև հարևան ժողովուրդները (լեռները բոլոր):

Եվ թող որոտան լեռները բոլոր,
Թող լինեն վկա մեր նոր հաշտության:

Բանաստեղծությունն ավարտվում է պարծառ տրամադրությամբ, բարու հաղթանակի հավատով:

Այն սեզ լեռները որոտում էին
Եվ ուրախության արցունքն էր հեղեղ:

Ժողովուրդների բարեկամության թեման Թումանյանին ուղեկցել է ամբողջ կյանքում, ավելի ճիշտ՝ եղել է նրա մարդկային ու բանաստեղծական էությունն անկապտելի մասը և թոմանյանական պարզությամբ ու թոմանյանական խորությամբ փայլել նրա ստեղծագործական կյանքի բոլոր էտապներում:

«Ես ամեն անգամ հրճվանքով եմ վերադառնում հայ և վրացի ժողովուրդների դարավոր անօրինակ լավ հարևանությանը, և խորին վիշտ է պատճառում ինձ մեջտեղի հեղած թյուրիմացությունը, — դրոս է բանաստեղծը:

Այո՛, թյուրիմացություն եմ ասում, որովհետև, շատ են խորն ու խորհրդավոր էս հին եղբայր ժողովուրդների կապերը, որ չկարողացան կտրել նույնիսկ կառավարությունները իրենց արյունոտ սխալով»⁶:

Տիրապետող դասակարգների կամքով ստեղծված այդ թյուրիմացությունը որքան դառնություն և վիշտ է պատճառել բանաստեղծին, որքան ջանքեր խլել երկու ժողովուրդների հարաբերությունների մեջ պարզություն մտցնելու համար: Այս իմաստով հետաքրքրական է 1916 թ. հրապարակված «Վրաստանի համար» բանաստեղծությունը, որն ունի նաև «Հեռվածի փոխարեն» ենթավերնագիրը: Դա հոշոտ է այն մասին, որ հայ և վրաց ժողովուրդների հարաբերությունների կարգավորման հարցը շատ է հուզել Թումանյանին. սկզբում նա ցանկացել է նորից հորվածով հանդես գալ, հետո նախընտրել է բանաստեղծական ձևը, որն այստեղ շատ մեծ տարողություն ու խոր բովանդակություն ունի: Բանաստեղծին տանջող մտքերը գարնան հեղեղի նման պոռթկում են միանգամից:

Երբ խոսում են Վրաստանի
Թշնամանքից արյունոտ,
Ձարմանք է ինձ պատում հայտնի
Եվ խորին ցավ և՛ ամոթ:

Այնուհետև հմտատ ռակերչի նման, տող առ տող նա կերտում է Վրաստանի կերպարը՝ «Աղ ու հացն է սիրել միշտ նա», «Միշտ աշխարհքին բարեկամ,

թեև պատած է հազար վերքով ու շատ ցավեր է տարել, բայց խաչակիր իրեն ձեռքով դեռ ոճիր չի կատարել:

Եվ իր ձեռքը եթե համառ
Տարածում է հին վկան,
Ոչ թե դաժան գործի համար,
Այլ դեպ պայծառ ապագան⁷:

Երբ այսպիսի հոգևոր ու բարոյական կերպար ունեցող ժողովուրդ է կանգնած դեմդ, էլ լի՛նչ անկման, ի՛նչ թշնամանքի մասին կարող է խոսք լինել:

«Կովկասն անսաստ» կանգնած է «Որ չհաղթի բուքը նրան, ինքան սուրա մոլեգին», «Որ նա հավետ մնա դալար, խորշակներից ապահով»:

Ու որպես այս ամենի եզրահանգում նորից է հնչում՝ թշնամանք չի՛ եղել ու չկա՛, չի՛ կարող լինել:

Երբ խոսում են իր անկումից
Թշնամանքից արթունոտ,
Ջարմանք է ինձ պատում անվերջ,
Ե՛վ խորին ցավ, և՛ ամոթ⁸:

1918 թ. «Վրաստանի ոգին» բանաստեղծությամբ⁹ Թումանյանը նորից է անդրադառնում հարազատ երկրի բանաստեղծական կերպարին. այստեղ չկա նախորդ բանաստեղծության թափը, կրքոտ բանավեճը «ոմանց» դեմ:

Այնտեղ առնական Վրաստանն է, այստեղ՝ լիբիականը: Առաջին տողից իսկ ընթերցողը համոզվում է երազային մի խաղաղ տրամադրությամբ, քընքուշ զգացմունքներով:

«Խոունկի բուրյան մշուշներում» ծնվում է Վրաստանի լիբիական կերպարը, երգի մրմունջներով պատած կանգնած է հեռվում «Վարդը կյանքի, հարսն երկնքի», «համակ շնորհք ու սրբություն», «լույս հայացքի խորքում անհուն, վառած սիրո կրակն անշեջ»:

Եվ ո՛վ կասի՝ կրա՛կն է շատ,
Թե՞ սրբությունն իր անարատ:

Որքան լավ պիտի ճանաչել մի ժողովրդի, որքան հարազատ պետք է լինել նրան այսպես խոր զգալու, եղբայրական ժողովրդի ցավը սեփական ցավի պես ապրելու համար:

Ախ, առնեի եղբոր ձեռքով
Բախտի ձգած քողը տրտում,
Որ նա հառներ իր ողջ գեղով,
Ապրեր ամուսնով էն ճոխ հովտում...¹⁰:

7 Նույն տեղում, հ. 1, էջ 187:

8 Նույն տեղում, էջ 188:

9 Նույն տեղում, էջ 194:

10 Նույն տեղում, էջ 195:

Վրաստանին նվիրված բանաստեղծությունների մի ամրակուռ շղթա է ձգվում Թումանյանի ավելի քան քառորդ դարյա ստեղծագործական ժամանակահատվածում՝ սկսած «Հաշտություն» (1892) և «Ն. Բարաթաշվիլու դամբարանի վերա» (1893) ստեղծագործությունից մինչև «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» (1919)։ Բանաստեղծական այս շղթայի վերջին օղակը թեև նախորդից բաժանված է ամբողջ քսանյոթ տարիներով, բայց շատ բանով է հիշեցնում այն. գուցե ավելի ճիշտ կլիներ ասել, որ սա առաջին բանաստեղծության տրամաբանական բարձրակետն է։

Հիշենք իննսունական թվականները, երբ գրվեց «Հաշտությունը»։ Բանաստեղծությունը արդ օրերի հարազատ արտացոլումն է։ Այս երկու բանաստեղծությունների գրության միջև ընկած ժամանակահատվածը լի է հասարակական կյանքում կատարված լուրջ տեղաշարժերով։

Ռուսաստանում հաղթանակած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը հաղթանակի որոշակի հույսեր էր ներշնչում նաև անդրկովկասյան ժողովուրդներին, մատնանշում ազատագրության ուղիները։ Այստեղ ևս հեղափոխական մեծ խմորամներ էին կատարվում, և ժողովուրդները կանգնած էին դարերով երազած ապագայի նախաշեմին։ Այս պայմաններում ահա անհիշելի ժամանակներից շրթեշուրթ անցած բարեկամության երգն էլ նորոգվում է նորից նոր, մաքրվում երբեմնի ցավի, կարոտի ու թախծի նոտաներից, ուրախ շեփորում բարեկամության մոտալուռ հաղթանակը՝ ազգերի ազատ, իրավահավասար ընտանիքում։ Բանաստեղծի խոսքը հին օրերի վերջալուսին, նոր կյանքի արշալույսն ավետող բերկրանքի երգ է։

— Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ հին ու նոր

Արի՛, բարձի ընկերներ,

Արարատի կողմից էսօր—

Ծղբայրական երգ ու սեր¹¹։

Ինչպես «Հաշտության» մեջ, այնպես էլ այստեղ նույն Արարատն է (հայ ժողովրդի հավաքական կերպարը) դիմում եղբայրական ժողովրդին, այլ է սակայն դիմումի բովանդակությունը։ Մանր են ոչ շատ հեռու անցյալի պատմության դասերը, բայց ավափեցնող.

Շա՛տ, շատ արցունք թափվեց մեզնում,

Մեն մի կաթիլն—մի խրատ,

Անլուռ, անդուլ էն է ասում—

Ճամփա չունի գործը վատ։

Թող՝ ուլ կոսզի՝ երկար-բարակ

Զոռ տա խելքին մինչև մահ,

Մենք իմաստուն—սիրենք, խնդանք

Կյանքը էս է, ինչ որ կա¹²։

¹¹ Նույն տեղում, էջ 196։

¹² Նույն տեղում, էջ 197։

Բարեկամության այս երգը, որ կարդացվել է վրաց պոեզիային նվիրված երեկույթում (1919 թ. ապրիլին), հզոր բովանդակությամբ պատռում է վերնագրի համեստ շրջանակները: Պատահական չէ, որ այն անմիջապես թարգմանվում ու տպագրվում է ռուսերեն և վրացերեն: Երկու ժողովուրդների բանաստեղծներին ու մտավորականությանը հուզող եղբայրական այս սրտաբուխ խոսքը իր «Մենք իմաստուն—սիրենք, խնդանք» նշանաբանով ավելի լայն հղում ունի՝ երկրից երկիր անցնելու պատգամ:

Ամեն կողմից թող ամենին
Հըրապուրի ու բերի
Բազմալեզու խըրախճանին
Մեր Կովկասի ազգերի¹³:

Դա համաժողովրդական հավաքի հրավեր է, նոր կյանք մտնելու կոչ:

Ելնե՛ք՝ տեսով ու ճանաչով
Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝
Մեր քյամանչով, ուրախ կանչով
Գրնանք դեպ կյանքն ընդհանուր¹⁴:

Թումանյանը հանճարի ուժով փառաբեր բայթրացնում է մեծ արվեստի աստիճանի, համամարդկային բովանդակություն հաղորդում նրան: Ավելորդ չենք համարում, քննարկվող բանաստեղծությունների առիթով, մի անգամ ևս կրկնել վաղուց հաստատված այն ճշմարտությունը, թե Թումանյանը մեծ ընդհանրացումների բանաստեղծ է, միայն ընտրյալներին տրված մի շնորհ, որը խարսխված է կյանքի փիրիտփայական ընկալման ու բազմակողմանի իմացության վրա: Նա առնում էր ժողովրդից, կյանքից, անցկացնում սեփական ստեղծագործական պրիզմայով ու նորից կյանք վերադարձնում, տալիս ժողովրդին: Ինչի մասին էլ գրում է մեծ հումանիստը, մտորումների կենտրոնում միշտ մաքուր է, մարդկային:

Թումանյանի տղջ ստեղծագործությունը վերջին հաշվով մարդու և մարդկային փառաբանումն է ու պայքարը մարդ անհատի երջանկության համար:

Երնեկ նրան ով մարդ կգա
Ու մարդ կերթա անարատ:

Մարդ-անհատի երջանկությունը Թումանյանի պատկերացումներում ձուլվում է ազգերի, ժողովուրդների երջանկությանը, մի բան, որ նրա հաստատ համոզմամբ հնարավոր է միայն ազատ աշխարհում, բարեկամության ու խաղաղ համակեցության պայմաններում:

Նույնիսկ ռեակցիայի տարիներին նրան չէր լքում պայծառ ապագայի հավատը: Ու նա տիրող խավարի թագավորությանը հակադրում էր երջանկության իր շքեղ երազը՝ հեքիաթային «Ոսկի քաղաքը»:

¹³ Նույն տեղում, էջ 196:

¹⁴ Նույն տեղում, էջ 197:

Ա՛խ, ինչ լին է աշխարհն ազատ
 էս կյանքի համար, ամենքի համար.
 Ինչքա՛ն լիքն է, ինչքան առատ
 էս կյանքի համար, ամենքի համար:
 Ա՛խ, ի՛նչ լավն է աշխատանքը,
 Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
 Ի՛նչ անուշ է հոսում կյանքը
 Լիքը սիրով, ծաղկով, երգով¹⁵:

Իսկ որտեղի՞ց է գալիս այս անսահման երջանկությունը, ո՞րն է նրա աղբյուրը: Որոշակի է այս հարցի թումանյանական պատասխանը. «Մենք տեր ու ծառա չգիտենք»,— ասում են Ոսկի քաղաքի բնակիչները: Կյանքը առանց տիրոջ ու ծառայի,— ազատ լայն աշխարհում, աշխատանքը առողջ ձեռքով, խաղաղ հոգով, լիքը սրտով, ծաղկով, երգով:

Առանց տեր ու ծառայի, հաշտ ու խաղաղ մարդկության թումանյանական այս շքեղ երազը, հետագա տարիներին հասարակական, քաղաքական նոր իրադրության պայմաններում դուրս է գալիս Ոսկի հեքիաթի շրջանականներից ու ավելի լայն թևածումով կյանք մտնում:

«Դուք էլ, երկրորդով եք նայում էն անդունդին,— գրում է բանաստեղծը 1919 թ. Լևան Կիպիանուն,— որ փորել են մեր ժողովուրդների մեջ մեր կառավարող շրջանները: Սակայն չէ՞ որ ժամանակն աշխարհինն նոր լոգունգ է տվել,— էդ տեսակ դեպքում երես դարձնել կառավարող շրջաններից և նայել հասարակ ժողովրդին, ամեն մի ազգի ընդհանրությանը, և խսկուն ձեռք երկրորդ կանցնի»¹⁶: Ապա, որպես հաստատումն իր ասածի, պատմում է վրացական մենշևիկների հանցավոր գործունեության հետևանքով հայերի և վրացիների միջև տեղի ունեցած ընդհարման ժամանակ կատարված մի հետաքրքրական դեպքի մասին: Վրաստանի և Հայաստանի սահմանը բաժանող կամրջի մեկ ծայրին կանգնած է հայ զինվորը, մյուսում՝ վրացի մարտիկը, և հրացանները բռնած համառ ու անթաղթ նայում են իրար որպես թշնամի բանականների պահակներ: Պարզվում է, որ նրանք հին ընկերներ են. միասին են աշխատել, միասին ուրախացել ու միասին տխրել, իսկ այժմ հարկադրված են թշնամաբար նայել միմյանց: Մոտիկ գյուղացիներից իմանալով, որ հրամանատարներ չկան շրջակայքում, նրանք թափով գրկախառնվում և համբուրվում են, ապա նորից կանգնում իրենց պահակակետերում: Արտաքուստ զավեշտական թվացող այս պատմության մեջ թումանյանը բացահայտում է կյանքի խոր փիլիսոփայությունը, դարերով արմատացած բարեկամության անսասանությունը: Վճռողը ժողովուրդներն են, ասում է նա. «Մեր ժողովուրդներն իրենք ցույց են տալիս ճանապարհը և հյամայում են գնալ էդ ճանապարհով»¹⁷: Ամեն անգամ ժողովուրդների փոխհարաբերությունների մասին խոսելիս, նա կրկին ու կրկին հավաստում է. «Ժողովուրդների որոշումներն ու քայլերն ավելի արժեք ունեն, քան նրանց կառավարություններին»: Կառա-

¹⁵ Նույն տեղում, հ. 3, 1949, էջ 227:

¹⁶ Նույն տեղում, հ. 4, էջ 416 (ընդգծումը մերն է):

¹⁷ Նույն տեղում, էջ 418:

վարութիւնները ժամանակավոր են և փոխարինելի, ժողովուրդները՝ մշտական ու անփոփոխ»¹⁸։

Մեծ բանաստեղծը միշտ իր ժողովրդի հետ էր և այդ դիրքերից էլ ժողովուրդների բարեկամութեան ու խաղաղ համակեցութեան կոչ էր անում։

Ամբողջ կյանքում հաշտ ու խաղաղ մարդկութիւն ենրագող բանաստեղծը մի առանձին ջերմութեամբ է խոսում ռուս ժողովրդի, ռուսական մշակույթի մասին։ Ռուս կլասիկ դրականութեան ժողովրդայնութիւնը, ճշմարտացիութիւնն ու ռեալիստական տրագիքիաները նշանակալից դեր են կատարել մեծ բանաստեղծի աշխարհայացքի ու գրական ըմբռնումների ձևավորման գործում։ Թումանյանը խոստովանում է, որ ինքը ստեղծագործել սկսել է ռուս բանաստեղծների ազդեցութեամբ. «Բայց այդ կատարվել է այնքան աննկատելի,— ավելացնում է նա,— անգիտակից կերպով, որ ես չեմ կարող մատուցել ու ցույց տալ նրանց ազդեցութեանը իմ ոտանավորներում։ Այն զգում եմ իմ սրտի, իմ ճաշակի, իմ բարոյական ամբողջութեան վրա»։ Ռուս գրականութեան այս բարերար ազդեցութեանը զգացվում է ինչպես Թումանյանի, այնպես էլ հայ կլասիկ գրականութեան մյուս մեծ ներկայացուցիչների (Իսահակյան, Տերյան և այլն) վրա։ Ռուսական առաջին հեղափոխութեան տարիներին, հեղափոխութեան բարձրացող ալիքի ազդեցութեան տակ, նրանք ավելի ռեալ են պատկերացնում ժողովուրդների իրավահավասարութեան և ազատութեան ուղիները և ցարիզմը տապալելու բացահայտ կոչ են հնչեցնում։

Ուշագրաւ է, որ դեռևս 1903 թ. Ստեփան Շահումյանի խնդրանքով (մալիսեկյան ցույցերի համար) Թումանյանը թարգմանում է Պուշկինի «Ազատութիւն» օդայի հայտնի քառատողը.

Աստում եմ քեզ և քո գահը,
Միահեծան գոռոզ ցար,
Եվ քո որդոց ու քո մահը
Պիտի տեսնեմ անպատճառ¹⁹,

Նա հայացրեց Պուշկինի այս ստեղծագործութիւնը, աննկատելիորեն դրա մեջ շաղախելով իր տեփական հոգին, իրեն հուզող մտքերն ու զգացմունքները, ատեղութիւն ամեն տեսակ բռնութեան ու տիրողի դեմ։ Այս ցատումն ու ատելութիւնն անցնում են մեծ հումանիստի ամբողջ ստեղծագործութեան միջոյով, որպես սրբազան բողոք շարի ու շարիքի դեմ։ Հիշենք նրա բազմաթիւ լեզուներն ու հեքիաթները, հիշենք, «Սասունցի Դաւիթ» իմաստուն ծերունուն.

Թագավորն է քո թշնամին
Կռիւլ տնեա—իր հետ արա։

Իսկ ավելի ուշ՝ 1917 թ., որպես իր բազմամյա փորձի ամփոփում, նա նորից է դնում վաղուց համոզմունք դարձած իր բանաստեղծական թեզը.

¹⁸ Նույն տեղում, էջ 425։

¹⁹ Նույն տեղում, հ. 1, էջ 565։

... Ու միշտ քանի որ կա
 Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
 Զի լինելու երկրի վրա
 Ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր...²⁰

Բանաստեղծի խոսքը հնչում է որպես դատավճիռ ժողովուրդներին սրի ու ավերի մատնող շահագործական կարգերի դեմ, և սա, շատ անգամ, և՛ պոեզիայում, և՛ արձակում, և՛ հրապարակախոսության մեջ, և՛ առանձին խոսակցություններում, ու մտերիմների շրջանում, և՛ նամակներում, և՛ հոդվածներում:

Թումանյանն էլ մեծ Աբովյանի նման իր բազմաշարժար ժողովրդի բախտը կապում էր Ռուսաստանի հետ, այն էլ նոր Ռուսաստանի, հեղափոխական Ռուսաստանի հետ: Դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թումանյանը դրում էր, տր երկար դարերով աչքը Արևմուտքին հառած մերթ մեկ, մերթ մյուս եվրոպական քրիստոնյա պետություններից օգնություն աղերսող հայ ժողովրդին ագարների փորձը, պատմության ընթացքը ու ժամանակի մատը ցույց տվին, որ այդ հույսն ու ապավենը Ռուսաստանն էր լինելու...»: Բանաստեղծն իր ելույթներում ու նամակներում բազմիցս կրկնել է պատմության ռեալ ընթացքից բխող մարգարեությունը, թե Ռուսաստանն է վճռում հայ ազգի հին արյունոտ խնդիրը, ապահովում նրա ապագան ու առաջնորդում նրան դեպի ազգերի եղբայրությունը, թե հայ ժողովրդի ապագան Ռուսաստանից պիտի լինի՝ «էն էլ նոր ազատ Ռուսաստանից»: Թումանյանն ամբողջ սրտով ու հոգով կապված է ռուս ժողովրդի, ռուսական առաջավոր մշակութի հետ: Նախատվետական շրջանի հայ գրողների մեջ նա առաջիններից մեկն էր, որ ցնծությամբ ողջունեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, բանվորա-գյուղացիական փշխանության հաստատումը Ռուսաստանում, դրա մեջ տեսնելով հայ ժողովրդի փրկությունը: Մեծ բանաստեղծին անսահմանորեն ոգևորում է աշխատավոր մարդկության գարեբով երազած իշխանության հաստատումը: 1920 թ. դեկտեմբերի 18-ին Հայաստանի հեղկոմին ուղղած նամակում նա գրում է. «Ամենքից լքված ու հուսահատված հայ ժողովուրդը իր հյացքը դարձրեց դարձյալ դեպի Ռուսաստանը և եկավ նա՝ նոր Ռուսաստանը: Այժմ նոր, ազատ Ռուսաստանից է կախված ոչ միայն հայ ժողովրդին ազատել վերահաս վտանգից, այլև ապահովել նրա անկախ քաղաքական կյանքը, իսկառ վերջացնել հայկական արյունոտ խնդիրը, հայ ժողովրդին հաշտեցնել մահմեդական հարևանների հետ և արդար աշխատանքի ճանապարհով առաջնորդել դեպի նոր կյանք»:

Թումանյանն իրեն հատուկ խորաթափանցությամբ տեսնում էր, որ նոր Ռուսաստանը նոր դարաշրջան է բացել մարդկության պատմության մեջ, որ նոր Ռուսաստանը խաղաղ կյանք է բերում ազնիվ աշխատանքով ապրող մարդկության համար:

Բանաստեղծը քիչ ապրեց ազգերի բարեկամության իր երազած մեծ ու խաղաղ ընտանիքում, բայց ապրեց իր շքեղ երազը իրականացած տեսնող

²⁰ Նույն տեղում, էջ 346:

մարդու անսահման բախտավորությունն ու խանդավառությունը: Նա դեռևս 1919 թ. մարգարեաբար կոչ էր անում ծեր Կովկասի ազգերին.

Հին օրերի վերջալուսին,
Արշալուսին նոր կյանքի
Երգենք սըրտանց ու միասին
Երգը հանուր բերկրանքի:
Բարձրը հընչի մեր երգը թող,
Չարի ձենը խըլացնի,
Հընչյուններովն իր կախարդող
Երկրն երկիր թող անցնի²¹:

Հիմա Թումանյանը խոսում է ոչ միայն Կովկասի, այլև աշխարհի շատ ու շատ ժողովուրդների հետ, նրանց լեզուներով: Նրա երգն իր կախարդական հնչյուններով անցնում է երկրից երկիր, խլացնում շարի ձայնը և պատգամում բարեկամության, սիրո ու եղբայրության խոսքը:

Մթանով պետք է բացատրել այն մեծ հետաքրքրությունը, որ ցուցաբերում է մեր գրականագիտությունը Թումանյանի ստեղծագործական տրադիցիաների և հատկապես նրա ինտերնացիոնալ բնույթի նկատմամբ: Մեծ խորհուրդ կա այն բանում, որ Չարենցը, Թումանյանի մահվան ժանր տպավորությունամբ, փորձելով բնութագրել նրա ստեղծագործությունը «եղբայրության շաղախ» անվանեց այն²²: Այսպիսով, առաջադրվեց մեծ գրողի ստեղծագործական տրադիցիաների ուսումնասիրման և արմատավորման կարևոր առաքելություններից մեկը՝ Թումանյանը և ժողովուրդների բարեկամությունը: Այս հարցն առավել կարևորություն է ստանում այն պատճառով, որ սերտորեն ազդեցվում է Թումանյանի ստեղծագործության գաղափարական հիմքերին, նրա ժողովրդայնությանն ու ժողովրդականությանը, «տիեզերքն ամբողջ Հայրենիք և տուն» նրա բանաստեղծական դավանանքին:

2. Թումանյանի ստեղծագործության գաղափարական, գեղարվեստական աչք առանձնահատկությունները լինելով հայ բազմադարյան գրականության զարգացման տվյալ էտապի օրինաչափ արտահայտությունը, իրենց հերթին խոր ազդեցություն թողեցին ժամանակի գեղարվեստական մտքի բուրնդացման վրա և որպես կենսատու ավիշ անցան տվեցին հայ գրականությանը:

ТУМАНЯН И ДРУЖБА НАРОДОВ

ГРАНУШ ДАРБИНЯН

Р е з ю м е

Гуманизм и идеи дружбы народов красной нитью проходят через всю армянскую литературу. Это многовековая тема приобретает новое звучание в творчестве Ов. Туманяна. Она обогащается новыми проявле-

²¹ Նույն տեղում, էջ 196:

²² «Խորհրդային Հայաստան», 15. IV. 1923:

ниями, новыми красками и нюансами. Эти идеи становятся неотъемлемой чертой его поэтической и человеческой сущности.

В тяжелых условиях, когда царское самодержавие разжигало рознь между народами, Туманян, как истинный поборник мира, воспекает светлый гуманизм, единство, любовь и братство народов.

Глубоко понимая ход исторических событий, поэт приходит к твердому убеждению, что судьба своего народа тесно связана с другими народами Закавказья и с русским народом, победой Октябрьской Социалистической революции.